«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Սաների կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտման գործիքների կիրառումը(ձևերը և միջոցները) և դրանց ուսումնադաստիարակչական աշխատանքների ճիշտ կազմակերպումը

Հաստատություն՝ Կամարիսի «Կակաչ» մանկապարտեզ ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Լիանա Խաչատրյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023 թ.

Բովանդակություն

Դասի պլան.....3

Ներածություն.....4

Գլուխ Առաջին

Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտման գործիքները.....7

Գլուխ Երկրորդ

ԿԱՊԿՈՒ անձանց ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպումը.....10

Եզրակացություն.....14

Օգտագործված գրականության ցանկ.....16

Դասի պլան

Դասի թեմա – ձմռան հեքիաթը

Ինտեգրվող թեմա – տարվա 4 եղանակները

Խումբ – ավագ

Տևողություն – 15 -20 րոպե

Նպատակ – երեխաների մոտ ձևավորել պատկերացում դրսում տիրող եղանակի պայմանների մասին ։

Ուսուցման մեթոդներ – զրույց, հարց ու պատասխան, եղանակը բնորոշող նկարների ցուցադրում։

Միջառարկայական կապեր – խոսքի զարգացում, էկոլոգիա, նկարչություն

Դասի կահավորում – խմբասենյակի կենտրոնում տեղադրել դասին վերաբերվող նկարներ։

Դասի ընթացք – կազմակերպչական մաս, երեխաների հաճախումների ստուգում, բացատրված թեմայի ամրապնդում

Խթանում – երեխաներին հանձնարարել տուն գնալու ճանապարհին փորձել գտնել փոփոխություններ ձմռան եղանակին բնորոշ։

Ներածություն

Կրթության մատչելիությունը և հասանելիությունը, որպես հասարակության զարգացման և առաջընթացի միջոց, ամրագրվել են դեռևս 1990-ական թվականներին, երբ ՄԱԿ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ երկրների կողմից ընդունվեցին «Կրթությունը բոլորի համար» համաշխարհային հռչակագիրը և «Երեխաների իրավունքների» կոնվեցիան։

2010 թվականին տեղի ունեցավ Հայաստանի կողմից հաշմանդություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվեցիայի վավերացումը և 2015 թվականի զարգացումները, մասնավորապես՝ կայուն զարգացման օրակարգի և նպատակների ընդունումը ՀՀ-ի կողմից, որոնք ավելի ամրապնդեցին հատուկ կրթության համակարգի բարեփոխումները մեր երկրում։ Համընդհանուր ներառական կրթությունը մեր երկրում դեռևս ձևավորման փուլում է։ Վերջին տասնամյակում մեր պետական մարմինները, ինչպես նաև հասարակական կազմակերպություններն ակտիվորեն զբաղվում են ներառական կրթության շուրջ հասարակական կարծիքի ձևավորմամբ, խնդիրների վերլուծությամբ, լուծումների որոնումներով և համապատասխան օրենքների մշակմամբ։

Ներառական կրթությունը կարևորագույն գործընթաց է, որն արձագանքում է յուրաքանչյուր սովորողի կարիքներին՝ կրթական հաստատություններում ստեղծելով այնպիսի միջավայր, որտեղ ամեն մի սովորող արժևորվում է իր առանձնահատկություններով։

Ներառական կրթությունը երեխայի նկատմամբ ցանկացած խտրականություն բացառելու գաղափարախոսությունն է, ինչպես նաև յուրաքանչյուրին՝ որպես առանձին անհատ, ընդունելու մոտեցումը: Մեր հասարակությամ մեջ ներառական կրթությունը ընկալվում է մասնակիորեն, քանի որ ներառական կրթությունը ասոցացվում է հաշմանդամություն ունեցող երեխաների հետ, իսկ վերջիններիս կարիքները բնութագրելու համար հաճախ գործածվող «ներառական երեխա» կամ «կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա» սահմանումները արդեն իսկ ենթադրում են առանձնացում և պիտակավորում: Արդյունքում այդ երեխաների հնարավորությունների նկատմամբ մանկավարժների սպասելիքները և ակնկալիքները ավելի ցածր են լինում, ինչն էլ հանգեցնում է նրան, որ այդ երեխաների հնարավորություններն ու կարողություններն ամբողջությամբ չեն բացահայտվում և զարգանում:

Երբ կրթությունը ներառական է, ապա դրանից շահում է երեխան, ընտանիքը, պետությունը և հասարակությունը: Ներառական կրթության ներդրման նպատակն է ունենալ կամ ստեղծել ուսումական այնպիսի հաստատություններ, ուր կրթություն ստանում են բոլորը. այդ թվում նաև՝ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձինք: Ներառական կրթությունը համընդհանուր դարձնելով՝ պետությունը մեծացնում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց մասնակցությունը ուսումական, մշակութային, համայնքային կյանքին և նվազեցնում է կրթությունից նրանց դուրս մնալու հավանականությունը:

Ներառական կրթության մոդելը ևս ընդունքում է, որ բոլոր երեխաները ՝ իրենց ընդունակություններով, հմտություններով և կարողություններով տարբեր են լինում, իսկ կրթական հաստատությունները պետք է հարմարվեն բոլոր սովորողների մտավոր, ֆիզիկական և հոգեկան զարգացման կարիքներին և անհատական պահանջմոպնքներին: Ներառումը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հնարավորություն է տալիս կրթություն ստանալ իրենց համայնքներում և չմեկուսանալ ընտանիքից:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոնվեցիան առաջադրում է օժանդակության ավելի լայն մոտեցում ներառական կրթության միջոցով, որը մանկավարժներից պահանջում է ապհովել մատչելիություն բոլորի համար: Կոնվենցիան ընդունած պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցներ, որպեսզի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձինք մյուսների հետ հավասար հավասար հիմունքներով լիակատար մասնակցություն ունենան կյանքի բոլոր բնագավառներին:

Մեր հետազոտության համար հիմք են հանդիսացել մի շարք ուսումնական ձեռնարկներ, որոնք նպատակ ունեն նպաստել ներառական ներառական կրթության զարգացման գործընթացին: Սաների կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտման և ուսումնադաստիարակչական աշխատանքի կազմակերպման վերաբերյալ այս հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլուխներից, որոնք համապատասխանաբար վերնագրված են՝ «Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտման գործիքները» և «ԿԱՊԿՈՒ անձանց ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպումը» վերնագրերով, ինչպես նաև աշխատանքում առկա է սեփական վերլուծությունների հիման վրա կատարված եզրակացություն:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտման գործիքները

ՀՀ-ում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց մասին օրենքը և համապատասխան ներառական կրթության ՀՀ ծրագիրը ընդունվել են 2005 թվականին: ԿԱՊԿՈՒ անձանց կարիքի գնահատումը իրականացվում է մանկավարժահոգեբանական չափանիշներին համապատասխան, երբ երեխայի մոտ ուսումնառության ընթացքում կամ արտակարգ իրավիճակներով պայմանավորված՝ նկատվում են կայուն դժվարություններ[1]:

ԿԱՊԿՈՒ անձանց բացահայտման և գնահատման նպատակն է՝

1. Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների ապահովելը՝ ծրագրային, մեթոդական և այլ միջավայրային անհրաժեշտ հարմարեցումներով:
2. ՀՀ օրենքով սահմանված կարգով և դեպքերում ֆինանսավորման բարձրացված չափաքանակ տրամադրելու հիմքով:
3. Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մակարդակը, ծավալների և տևողության որոշումը:

ԿԱՊԿՈՒ անձանց բացահայտման գործիքները կիրառվում են միայն այն դեպքում, երբ ուսումնական հաստատության մանկավարժահոգեբանական աջակցության խումբն ունի երեխայի հետ կապված մտահոգություններ, և ծնողը գրավոր դիմում է հաստատության տնօրենին, որպեսզի մանկավարժահոգեբանական աջակցության խումբը իրականացնի դպրոցական մակարդակի գնահատում:

[1] Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին ՀՀ օրենք հոդված 4, կետ 1

Կարևոր է, որ ուսուցիչը կամ մանկավարժահոգեբանական աջակցության խումբը դիտարկման արդյունքում կարողանա պարզել, թե երեխան որ ոլոտում կամ ոլորտներում ունի դժվարություններ և բացահայտի աջակցության չափը: Դպրոցներում երեխայի գործունեության գնահատման և բացահայտման գործիքները բաղկացած են 20 բաժիններից.

1. Ընբռնել հրահանգները և հետևել դրանց,
2. Հարմարեցման կարողություն,
3. Մասնակցելու և ակտիվ լինելու շահագրգռվածություն,
4. Փոխհարաբերությունները հասակակիցների հետ,
5. Ինքնասպասարկում,
6. Խոշոր մոտորիկա՝ տեղաշարժվում,
7. Մանր մոտորիկա՝ դաստակի և ձեռքերի գործածում,
8. Ուշադրություն,
9. Հիշողություն,
10. Հաղորդակցում,
11. Ընտրություն կատարելու կարողություն,
12. Կուլ տալու կարողություն,
13. Կարդալու կարողություն,
14. Գրելու կարողություն,
15. Խոսելու կարողություն,
16. Վարքի կառավարում,
17. Համայնքի մատչելիություն,
18. Մեքենայով փոխադրում,
19. Կողմնորոշում,
20. Ապահովության դատողություն

Վերոգրյալ գործիքները կիրառող մասնագետները պետք է կատարեն օբյեկտիվ գնահատում՝ բացառելով դրական կամ բացասական վերաբերմունքը երեխայի

նկատմամբ: Նշված գործիքների կիրառությունը հնարավիրություն է տալիս մասնագետներին ճշգրիտ որոշել, թե որ ոլորտում ինչ չափի աջակցություն է անհրաժեշտ անձին: Եթե երեխան ստանում է չնչին օգնություն և առաջադրանքն ավարտին հասցնելու համար 75%-ից ավելին կատարում է ինքնուրույն, ապա աջակցությունը լինում է շատ չնչին: Երեխան այդ դեպքում օգնություն է ստանում միայն ուղղորդման ձևով:

Եթե երեխան ստանում է չափավոր օգնություն, սակայն կարողանում է ինքնուրույն կատարել առաջադրանքը 50-74% -ով, ապա առկա է միջին աջակցություն, սակայն առաջադրանքի կեսից ավելին կատարում է ինքնուրույն: Իսկ երբ հանձնարարված առաջադրանքի կեսից քիչն է կատարում ինքնուրույն, սակայն ջանք է կիրառվում այն կատարելու համար, ապա անձին անհրաժեշտ է մեծ հաճախականությամբ և պարբեաբար կրկնվող աջակցություն:

Ամբողջական կամ մշտական աջակցություն ստանում է անձը այն դեպքում, երբ կատարում է առաջադրանքի 25 %-ից ոչ ավելին կամ առաջադրանքը չի կատարվում:

Այսպիսով՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սաների բացահայտումը ճիշտ ժամանակին, և ճիշտ մասնագիտական խմբի կողմից, ինչպես նաև աշխատանքը նրանց հետ կնպաստեն նրան, որ երեխան, ստանալով մասնագիտական աջակցություն, կկարողանա մասնակի կամ լիարժեքորեն շտկել կամ մեղմել նկատվող դժվարությունները որոշակի գործություններ իրականացնելիս: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բացահայտման գործում շատ կարևոր է ծնողների պատրաստակամությունը, համագործակցությունը երեխայի հետ աշխատող խմբի հետ, քանի որ նման մոտեցումը կձևավորի երեխայի մոտ ապահովության և վստահելիության զգացում այն մարդկանց նկատմամ, ովքեր ակտիվ շփման մեջ են գտնվում իր ծնողների հետ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԿԱՊԿՈՒ անձանց ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպումը

Հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ կանխակալ վերաբերմունքը բավական ամուր է արմատավորված։

Պատճառներն են՝

Տեղեկատվական բացակայությունը նրանց վերաբերյալ,

Գիտելիքների պակասը,

Նրանց հարևանությամբ ապրելու և գործելու փորձի բացակայությունը։

Սակայն փորձը ցույց է տալիս, որ փոքրիկները ավելի լավ են ընդունում դիմացինի տարբերվող լինելը, քան մեծահասակները։ Եթե հաշմանդամություն ունեցող երեխաները այցելեն նույն մանկապարտեզը կամ դպրոցը, ինչ մյուս երեվաները, բոլորի մոտ կձևավորվի անկանխակալ վերաբերմունք հաշմանդամություն ունեցող բոլոր մարդկանց նկատմամբ, և կարմատավորվի այն գիտակցությունը, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ հասարակության լիիրավ անդամ են։ Կյանքի ժամանակակից պայմաններում լուրջ խնդիրներից մեկն է երեխաներին և հատկապես ԿԱՊԿՈՒ երեխաների զարգացմանը և կրթությանը խոչընդոտող հանգամանքները։

ԿԱՊԿՈՒ երեխաների կրթությունը կազմակերպելու համար լավագույն լուծումն է ներառական կրթությունը, քանի որ համընդհանուր կրթական համակարգը չի առանձնացնում երեխաներին, իսկ հաշմանդամություն ունեցող անձինք վաղ տարիքից ներգրավվածություն են ունենում հասարակության մեջ։ Երեխաները պետք է սովորեն միասին, ինչն էլ օգտակար կլինի բոլորի համար և պետք չէ նրանց «պաշտպանել» իրարից, քանի որ միայն ներառական մոտեցումը կարող է նվազեցնել վախը միմյանց հետ շփման մեջ, նպաստել ընկերական հարգալից վերաբերմունքի ձևավորմանը։ Սակայն ներառական կրթությունը , որպեսզի դառնա իրականություն, պետք է դպրոցները կարողանան ապահովել բոլոր

երեխաների մասնակցությունը՝ օգտագործելով տարբեր աշխատանքային միջոցներ, հնրաքներ և , իհարկե, անհատական մոտեցում: Ներառական կրթություն նշանակում է, որ դպրոցը/համլսարանը պետք է կարողանա որակյալ կրթություն տրամադրել բոլոր երեխաներին՝ անկախ նրանց տարատեսակ կարողություններից, և պետք է ստանան հավասար հնարավորություններ համատեղ սովորելու համար:

Հանրահայտ ճշմարտություն է, որ մարդիկ տարբեր են, սակայն դա միշտ անտեսվում է ուսումական ծրագիր կազմելիս, երբ ենթադրվում է, որ բոլոր երեխաները պետք է կարողանան սովորել միևնույն նյութը՝ տարբեր մեթոդներով և գործիքներով: Շատ կարևոր է, որ ուսումական ծրագրերը լինեն բավարար չափով ճկուն, և ուսուցիչներին տրվի դրանք երեխաների անհատական կարիքներին համապատասխանեցնելու, լուծումներ գտնելու հնարավորություն, որպեսզի յուրաքանչյուր երեխա ստանա իր կարիքներին և կարողություններին համապատասխան կրթություն: Ուսուցիչներին անհրաժեշտ է տրամադրել բավականաչափ ռեսուրսներ և մեծ աջակցություն, որպեսզի դասապրոցեսները անցկացվեն արդյունավետ, իսկ հակառակ դեպքում՝ ԿԱՊԿՈՒ երեխաների ընդգրկումը դասապրոցեսին կկրի ձևական բնույթ, այսինքն՝ երեխան ֆիզիկապես դասասենյակում է, բայց նա որևէ կերպ ներառված չէ համատեղ գործունեության մեջ և չի ստանում իրեն հասանելիք կրթությունը:

Ուսուցիչը ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքի իրականացումը պետք է կատարի տարբեր մասնագետների աջակցությամբ, սակայն արդյունավետության ապահովման համար կարևոր է շփումը երեխայի ծնողի հետ, որպեսզի պարզ և ընթեռնելի լինի երեխայի հետ ճիշտ աշխատելու կերպը: Ծնողի ներգրավվածությունը ուսուցման ընթացքին նպաստում է երեխայի սովորելու մոտիվացիային և դրական վարքի դրսևորմանը:

Ուսուցիչը ուսումնական գործընթացը պլանավորելիս հաշվի է առնում սովորողների կարիքները և իր աշխատանքը պլանավորում է նրանց կարիքներին համապատասխան՝ հաշվի առնելով այն փաստը, որ սովորողներն իրենց ունակություններով տարբեր են:

Մանկավարժը, որպեսզի ունենա արդյունավետ դասապրոցես բոլոր սաների համար, պետք է հրաժարվի ավանդական դասավանդման մեթոդներից, քանի որ դասապրոցեսի ժամանակ կարող է գտնվեն այնպիսի սաներ, որոնք դժվարություններ կարող է ունենան լսողության կամ տեսողության հետ:

Այսպիսով՝ ԿԱՊԿՈՒ երեխաների ուսումնադաստիարակչական աշխատանքային կազմակերպման համար անհրաժեշտ է, որ ուսուցիչը պարբեարաբար սովորի և կատարելագործի իր ունակությունները և ծանոթ լինի տարբեր աշխատանքային գործիքների կիրառությանը, որպեսզի դասարանում սովորող տարբեր ունակությունների տեր անձինք հավասարապես ընդգրկված լինեն դասապրոցեսին:

Սակայն չպետք է մոռանալ, որ ԿԱՊԿՈՒ յուրաքանչյուր երեխայի համար հատուկ մասնագետների խորհրդատվությամբ մշակվում է անհատական ուսուցման պլան, որը գործիք կամ միջոց է ուսուցիչների, դաստիարակների, ինչպես նաև երեխաների հետ աշխատող մասնագետների, ծնողների համար։

Սովորողի անհատական ուսուցման պլանը կազմվում է դիտարկման և գնահատման արդյունքների հիման վրա. Այն պետք է ունենա հստակ ձևակերպված վերջնանպատակ, տարեկան նպատակ, կարճաժամկետ խնդիրներ և տարեկան ծրագիր։ Երեխայի մեծանալու հետ փոփոխվում են նրա ուսումնական կարիքները և ըստ անհրաժեշտության՝ անհատական ուսուցման պլանը։

Եզրակացություն

Ուսումնասիրելով «Սաների կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտման գործիքների կիրառումը (ձևերը և միջոցները) և դրանց ուսումնադաստիարակչական աշխատանքների ճիշտ կազմակերպումը»՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին՝

- Մեր հասարակությունը դեռևս ունի կարծրատիպային վերաբերմունք հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ, չնայած այն հանգամանքին, որ արմատական փոփոխություններ են արվում ԿԱՊԿՈՒ անձանց՝ հասարակության մեջ լիարժեք ներգրավելու համար:
- Հասարակությունը պետք է ընդունի, որ մարդիկ իրենց կարողություններով և հմտություններով տարբեր են, և այդ տարբերությունը խոչընդոտ չի կարող հանդիսանալ համատեղ աշխատանքային գործընթացում:
- Մեծահասակները երեխաների մեջ դեռ վաղ տարիքից չպետք է ստեղծեն անհարկի վախեր և ծաղրական վերաբերմունք որևէ հոգեկան կամ ֆիզիկական խնդիր ունեցող անձանց հանդեպ:
- Ներառական կրթությունը լիարժեքորեն կազմակերպելու համար անհրաժեշտ է պետական մարմիններից ֆինանսական մեծ աջակցություն, որը կնպաստի արդյունավետ կրթության կազմակերպմանը, ինչպես նաև ազատ և ինքնուրույն տեղաշարժին այն մարդկանց համար, ովքեր ունեն դժվարություններ շարժունակության հետ:
- Մանկավարժները իրենց դասապրոցեսը արդյունավետ կազմակերպելու նպատակով պետք է հրաժարվեն ավանդական մեթոդներից, քանի որ վերջինները կարող են խոչընդոտ հանդիսանալ որոշ երեխաների համար ուսումնական նյութը յուրացնելիս:
- Ներառական կրթությունը իրականություն դարձնելու համար անհրաժեշտ է, որ մանկավարժները ստանան հնարավորություն վերապատրաստումների, որի արդյունքում ձեռք կբերեն նոր գիտելիքներ՝ ինչ մեթոդներով կազմակերպել արդյունավետ դասապրոցես, ուր ներառված կլինեն տարբեր հմտությունների տեր անձինք:

- Ներառական կրթությունը համընդհանուր դարձնելը այսօր դարձել է ժամանակի մեծագույն պահանջ, քանի որ օրեցօր նկատելի է դառնում ԿԱՊԿՈՒ երեխաների թվի աճ:
- Կրթությունը ներառական դարձնելով, կարծես թե վերականգնվում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների իրավունքները և նրանց տրվում է հավասար հնարավորություններ ինքնադրսևորվելու, ստեղծագործելու և հասարակական կյանքին լիարժեք մասնակցությ ունենալ իրենց համար հաղթահարելի ձևով:
- Ներառական կրթության ներդրումը հանրակրթական դպրոց կձևավորի նոր մտածելակերպ, ինչպես եկող սերունդների, այնպես էլ հանրության շրջանում, քանի որ հասարակությունը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին կդիտարկի ,որպես մարդկային բազմազանության մի տիպ, այլ ոչ թե հասարակական կյանքից դուրս մի օղակ:
- Ներառական կրթությունը մեր երկրում դեռ ձևավորման փուլում է գտնվում, որի լիարժեք ձևավորման արդյունքում կրթական հաստատություններում կստեղծվի այնպիսի միջավայր, որտեղ ամեն մի սովորող կարժևորվի իր առանձնահատկություններով:

Օգտագործված գրականության ցանկ

- Ներառական կրթության ռազմավարություններ, դասագիրք, ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևան, 2019, 252 էջ:
- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը տարածքային մակարդակում, մեթոդական ուղեցույց, Երևան, 2018, 150 էջ:
- Ներառական կրթություն, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2017, 146 էջ:

Համացանցային աղբյուրներ

www.mediamax.am

www.esce.am

www.unicef.org